<< 23>> 08 2023թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ __126____
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ՝ Ա.Դավթյանս քննելով <<08>> 08 2023թ. Թիվ 126 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ Երևան քաղաքի Կենտրոն Նորագյուղ փ.377/2 տ. բնակիչ Հայկ Պողոսի Սարգիսյանը /ծնվ.23.11.1996թ./ 08.08.2023թ-ին ժամը 16:40-ի սահմաններում գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակի հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ՝ օգտագործելով ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայկ Պողոսի Սարգիսյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը << >> _____2023թ. _____

Ոստ.Մասիսի բաժնի պետ _____ Ա.Դ.Դավթյան